ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 5 նոյեմբերի 2026 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Վարդանյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Հ. Հովակիմյանի

Քննության առնելով «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ (այսուհետ նաև՝ Դիմող, ի պաշտոնե ներկայացուցիչ՝ նախագահ Արաքս Մելքոնյան) անհատական դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հոկտեմբերի 26-ին (փոստային ծառայությանն է հանձնվել 2026 թվականի հոկտեմբերի 22-ին), որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ, 299-րդ և 300-րդ հոդվածները, իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ հանդերձ, ճանաչել Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ1/0591/11/25 գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ իրավական հարցադրումները. արդյո՞ք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156, 299 և 300-րդ հոդվածներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունն առ այն, որ վարույթի հանրային մասնակցի՝ արդեն իսկ ստուգված որոշման կրկնակի քննարկումը և նույնանման գործառույթներ ունեցող դատական ատյանների կողմից երկու հնարավոր տարբերվող դատական ակտերի գոյությունը բացառելու նկատառումներից ելնելով՝ մինչդատական ակտի դեմ բերված բողոքը չի կարող քննության առնվել, համապատասխանում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխիքներին, արդյո՞ք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156, 299 և 300-րդ հոդվածներին տրված՝ վերը նշված մեկնաբանությունը չի սահմանափակում անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների արդյունավետ իրացումը, և արդյո՞ք այդպիսի սահմանափակումը համահունչ, այսինքն՝ պիտանի, անհրաժեշտ և համարժեք է Սահմանադրությամբ սահմանված նպատակներին:

Դիմողը նշում է, որ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների բուն էությունից բխում է, որ տվյալ քրեական վարույթին ներգրավված յուրաքանչյուր մասնավոր մասնակից և (կամ) այլ անձ պետք է ունենա (ունենան) մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակներում վարութային այս կամ այն ակտը դատական կարգով վիճարկման առարկա դարձնելու իրավունք՝ անկախ վարույթի մյուս մասնակիցներից և նրանց կողմից ներկայացված բողոքների ելքից: Նման

մոտեցումը, ըստ Դիմողի, համահունչ է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին, այդ թվում՝ նույն օրենսգրքի 301 և 302-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներին այնքանով, որքանով դրանք սահմանում են մինչդատական ակտերի կապակցությամբ բողոքի բովանդակությանը ներկայացվող հստակ պահանջները, բողոքի վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու կոնկրետ հիմքերը՝ որպես այդպիսին չդիտարկելով վիճարկված վարութային ակտի իրավաչափությունն արդեն իսկ ստուգված լինելը:

Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա գործով վիճարկվող դրույթներին ՀՀ դատարանների կողմից տրված մեկնաբանությունը սահմանափակել է իր՝ համապատասխան քրեական վարույթով կայացված հանրային քրեական հետապնդում չհարուցելու և այդ որոշման վերադասության կարգով բողոքարկման կապակցությամբ կայացված՝ բողոքը մերժելու մասին վարութային ակտերը դատական կարգով վիճարկելու իրավունքը, քանի որ իր կողմից ներկայացված բողոքն այդպես էլ ըստ էության չի քննվել ՀՀ դատարանների կողմից: Բացի դրանից, Դիմողի պնդմամբ՝ կիրառված սահմանափակումն աղերս չունի Սահմանադրությամբ երաշխավորված՝ համաչափության սկզբունքի հետ, քանի որ այն սահմանված չէ որևէ օրենքով, հետևաբար՝ խոսք չի կարող լինել այդպիսի սահմանափակման՝ իրավաչափ նպատակ հետապնդելու մասին: Միաժամանակ՝ ըստ Դիմողի՝ խնդրո առարկա գործով ՀՀ դատարանների կողմից կիրառված սահմանափակումը խաթարել է վարութային ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակներում դատական իշխանության վերահսկող գործառույթի իրականացման բուն էությունը՝ հանգեցնելով արդարադատության իրականացումից հրաժարվելուն:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156, 299 և 300 հոդվածներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունն առ այն, որ վարույթի հանրային մասնակցի՝ արդեն իսկ ստուգված որոշման կրկնակի քննարկումը և նույնանման գործառույթներ ունեցող դատական ատյանների կողմից երկու հնարավոր տարբերվող դատական ակտերի գոյությունը բացառելու նկատառումներից ելնելով՝ մինչդատական ակտի դեմ բերված բողոքը չի կարող քննության առնվել, հանգեցնում է անձի՝ Սահմանադրության 61 և

63-րդ հոդվածներով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների խախտման, ինչպես նաև Սահմանադրության 75 և 78-րդ հոդվածների համատեքստում՝ անհամաչափ սահմանափակում է անձի՝ վարութային մինչդատական ակտերը դատական կարգով վիճարկելու իրավունքի արդյունավետ իրացման իրավունքը, որպիսի պայմաններում վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են Սահմանադրությանը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական հիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը վերոնշյալ աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման փաստի միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝* ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման***

առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է.

անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (սույն պարագայում՝ դրույթները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը) հանգեցրել է (են) Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156, 299 և 300-րդ հոդվածների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության)՝ Սահմանադրության 61, 63, 75 և 78-րդ հոդվածներին համապատասխանությունը, որի կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

այսպես՝ թիվ ԵԴ1/0591/11/25 գործի շրջանակներում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 25-ի՝ «Մինչդատական ակտի դեմ բողոքը քննելու մասին» որոշմամբ արձանագրել է. *«(...) նույն վարույթով փուժող Գայանե Արզումանյանի և մյուս փուժողների լիազոր ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանի կողմից նույնաբովանդակ հիմքերով և առարկայով ներկայացված բողոքի քննության արդյունքում ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 15-ին կայացրել է բողոքը մերժելու մասին թիվ ՀԿԴ/0234/22/25 որոշումը:*

Այսինքն, Դատարանն արձանագրում է, որ բողոքաբեր Արաքս Մելքոնյանի կողմից վիճարկվող նույն որոշման իրավաչափության վերաբերյալ առկա է դատական ակտ, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ նույն որոշումը չի կարող ևս մեկ անգամ դատական քննության առարկա դառնալ՝ հակառակ պարագայում այն կարող է իրավական խառնաշփոթի պատճառ դառնալ: Հետևաբար, նման պայմաններում, Դատարանը գտնում է, որ առանց բողոքի բովանդակային քննարկման՝ բողոքը ենթակա է մերժման»:

Տվյալ որոշման կապակցությամբ Դիմողի կողմից ներկայացված հատուկ վերանայման բողոքի հիման վրա Վերաքննիչ քրեական դատարանը 2026 թվականի փետրվարի 26-ին կայացրել է հատուկ վերանայման բողոքը մերժելու մասին որոշում, որով արձանագրել է. *«(...) վարույթի նյութերի համաձայն՝ սույն դեպքում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան՝ Դատախազի «Հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին» որոշումը, վարույթի մասնավոր մյուս մասնակիցների կողմից բողոքարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան, որն էլ ըստ էության քննարկել և գնահատել է որոշմամբ շարադրված հետևությունները և եզրահանգումները, իրավական արձագանք է տվել վարույթի հանրային մասնակցի հիշյալ ակտին՝ դրա դեմ ներկայացված բողոքը մերժելու ձևով, որի պայմաններում Դատախազի՝ արդեն իսկ ստուգված որոշման կրկնակի քննարկումը, և նույնանման գործառույթներ ունեցող դատական ատյանների կողմից երկու հնարավոր տարբերվող դատական ակտերի գոյությունը բացառելու նկատառումներից ելնելով քննարկվող իրավիճակում մինչդատական ակտի դեմ բերված բողոքը չի կարող քննության առնվել»*:

Այնուհետև՝ Վերաքննիչ քրեական դատարանի վերը նշված որոշման բողոքարկման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը 2026 թվականի ապրիլի 22-ին կայացրել է «Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

Այսպիսով, ողջ վերոգրյալից հետևում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում Դիմողի կողմից ներկայացված՝ մինչդատական ակտի վիճարկման վերաբերյալ բողոքը մերժվել է այն հանգամանքների հաշվառմամբ, որ նույն

վարույթով տուժող Գայանե Արզումանյանի և մյուս տուժողների լիազոր ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանի կողմից արդեն իսկ ներկայացվել է **նույնաբովանդակ հիմքերով և առարկայով բողոք**, որի քննության արդյունքում **Հակակոռուպցիոն դատարանը, քննարկելով և գնահատելով վիճարկվող մինչդատական ակտով շարադրված հետևությունները և եզրահանգումները, ինչպես նաև տվյալ մինչդատական ակտի իրավաչափությունը**, թիվ ՀԿԴ/0234/22/25 գործի շրջանակներում 2025 թվականի դեկտեմբերի 15-ին կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում: Այսինքն՝ թիվ ԵԴ1/0591/11/25 գործի շրջանակներում մինչդատական ակտի վիճարկման վերաբերյալ բողոքը մերժվել է, քանի որ **նույնաբովանդակ հիմքերով և առարկայով բողոքի հիման վրա մեկ այլ՝ թիվ ՀԿԴ/0234/22/25 գործի շրջանակներում Հակակոռուպցիոն դատարանն արդեն իսկ անդրադարձել է վիճարկվող մինչդատական ակտի իրավաչափությանը՝ քննարկելով և գնահատելով դրանում շարադրված հետևությունները և եզրահանգումները:**

Միաժամանակ, Սահմանադրական դատարանի դատական կազմը կարևոր է համարում ընդգծել, որ թիվ ԵԴ1/0591/11/25 գործի շրջանակներում Վերաքննիչ քրեական դատարանն արձանագրել է. *«(...) հիշյալ որոշման հետ կապված անհամաձայնություններ ունենալու դեպքում վարույթի մասնավոր մասնակիցը՝ տվյալ դեպքում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ Արաքս Մելքոնյանը զրկված չէ համապատասխան կառուցակարգի շրջանակներում ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հիշյալ որոշումը բողոքարկելու հնարավորությունից»:*

Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Դիմողը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156, 299 և 300-րդ հոդվածների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ տվյալ հոդվածներով**

երաշխավորված հիմնական իրավունքների խախտման փաստը, հետևաբար և՝ վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) և համապատասխան հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:

Փոխարենը Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 75 և 78-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ հոդվածների բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156, 299 և 300-րդ հոդվածների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին, հետևաբար և՝ Սահմանադրության 75 և 78-րդ հոդվածներին:

Այսինքն՝ **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, որը գործի քննությունը մերժելու հիմք է:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Վ. Վարդանյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Հ. Հովակիմյան

5 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԴԿՈ-99